ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3774-Ա « 12 » սեպտեմբերի 2025 թ.

ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ Ա-8 ԹԱՂԱՄԱՍԻ Հ.4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արտեմ, Աիդա և Մարիետա Ադամյանների, ինչպես նաև Լևոն Ադամյանի լ/ա Մարիետա Ադամյանի դիմումը՝ Նուբարաշենի Ա-8 թաղամասի հ.4 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Էրեբունու շրջանի Նուբարաշեն քաղաքատիպ ավան ավանային խորհրդի գործադիր կոմիտեի «Անձնական սեփականության իրավունքով անհատական բնակելի տան շինարարության համար անժամկետ օգտագործելու հողամաս հատկացնելու մասին» 04.10.1991 թվականի հ.10/2 որոշումը, Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի 19.09.2024 թվականի հ.33/01-89 և ՀՀ կադաստրի կոմիտեի 28/10/2024 թվականի հ.ԱՏ-28102024-01-0925 տեղեկանքները:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նուբարաշենի Ա-8 թաղամասի հ.4 հասցեի հողամասի փաստացի մակերեսը կազմում է 400.0քմ որքան որ ամրագրված է 04.10.1991թ. Հայաստանի Հանրապետության Էրեբունու շրջանի Նուբարաշեն քաղաքատիպ ավան ավանային խորհրդի գործադիր կոմիտեի «Անձնական սեփականության իրավունքով անհատական բնակելի տան շինարարության համար անժամկետ օգտագործելու հողամաս հատկացնելու մասին» հ.10/2 որոշան մեջ:

Քննարկվող հողամասը համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայասատնի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/-65957-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Նուբարաշենի Ա-8 թաղամասի հ.4 հասցեում գտնվող, Արտեմ, Աիդա Մարիետա և Լևոն Ադամյաններին բնակելի տան շինարարության համար հատկացված հողամասի սահմանները որոշվում են 400.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ